Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Պ-047-23.09.2021-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության 2021 թվականի մարտի 24-ի թիվ ՀՕ-147-Ն օրենքի 48-րդ հոդվածի.

1. 2-րդ մասում «քսան» բառը փոխարինել «երեսուն» բառով.

2. 12-րդ մասում՝

ա) «քսան» բառը փոխարինել «երեսուն» բառով և դրա համապատասխան հոլովաձևով.

բ) լրացնել նոր նախադասություն.

«Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի թափուր պաշտոնը ժամանակավոր զբաղեցնելու նպատակով նշանակում կատարվում է վարչապետի, իսկ մյուս ինքնավար թափուր պաշտոններում Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից:».

3. 15-րդ մասում «11-րդ» թիվը փոխարինել «13-րդ» թվով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը.

«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի (այսուհետ նաև՝ նախագծեր) ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է՝

- 2021 թվականի մարտի 24-ին ընդունված «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 48-րդ հոդվածի 12-րդ մասի դրույթի կիրարկումն ապահովելու հրամայականով,
- «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո սպասվելիք աննախադեպ գերծանրաբեռնվածությունը կառավարելի դարձնելու, կոռուպցիոն ենթադրյալ հանցագործություններով քրեական գործերի հարուցման հարցի լուծման և կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ առկա և կանխատեսվող քանակի քրեական գործերով նախաքննության կատարման հնարավորությունն ապահովելու, նշված գործերով քննության պատշաճ և որակյալ իրականացումն ապահովելու,
- ինչպես նաև, Հակակոռուպցիոն կոմիտեում հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց, այն է՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի մամուլի քարտուղարի, օգնականի և խորհրդականի, ինչպես նաև հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալների օգնականների իրավական կարգավիճակը հստակեցնելու հանգամանքներով:

Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիր.

Նախագծերի ընդունումը պայմանավորված է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշման միջոցառումների ծրագրի 2-րդ կետի կարգավորմամբ, որով նախատեսվում է կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման, քննության

գործառույթներով օժտված և անկախության բավարար երաշխիքներ ունեցող հակակոռուպցիոն իրավապահ մարմնի՝ Հակակոռուպցիոն կոմիտեի (այսուհետ նաև՝ Կոմիտե) ձևավորում և բնականոն գործունեության ապահովում: Միաժամանակ, նախատեսվում է, որ Կոմիտեն 2021 թվականին կձևավորվի և վերջինիս կտրամադրվի առանձին տարածք, բյուջետային ինքնուրույն ֆինանսավորում, գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գործիքակազմ:

Բացի այդ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշմամբ «Կոռուպցիայի դեմ պայքարը» 5.5-րդ կետում նշվել է, որ ակնկալվում է առավել սեղմ ժամկետում ամբողջ ծավալով գործարկել Կոմիտեն, որը հագեցված կլինի անհրաժեշտ նյութատեխնիկական և մարդկային ռեսուրսներով:

Ուստի՝ սույն Նախագծերով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կոմիտեի ձևավորումը ամրագրված է ռազմավարական նշված փաստաթղթերով, կապահովվի Հայաստանի Հանրապետության Հատուկ քննչական ծառայության (այսուհետ նաև՝ ՀՔԾ) լուծարման և Կոմիտեի ձևավորման հետ կապված իրավակարգավորումների առավել ամբողջական սահմանումը:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2020 թվականի մարտի 24-ին ընդունվել է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքները: Սակայն նշված օրենքների կարգավորման առարկայի շրջանակից դուրս են մնացել որոշակի հարաբերություններ, որոնք ունեն իրավական ամրագրման կարիք:

Մասնավորապես, խոսքը վերաբերում է Կոմիտեում հայեցողական պաշտոններ սահմանելու անհրաժեշտությանը, Կոմիտեի ծառայողների իրավական կարգավիճակին և այլն: Նշված խնդիրներից յուրաքանչյուրն ունի առանձին քննարկման կարիք: Այսպես՝

1. Հիմք ընդունելով Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասում և 48-րդ հոդվածի 11-րդ մասում առկա կարգավորումները՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը պաշտոնի նշանակվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, հաստատում է Հակակոռուպցիոն կոմիտեի հայեցողական պաշտոնների անվանացանկը: Հարկ է նշել սակայն, որ գործող օրենսդրական կարգավորումների պարագայում Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի մամուլի քարտուղարի, օգնականի և խորհրդականի, ինչպես նաև հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալների օգնականների պաշտոնները ընդգրկված չեն «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված հայեցողական պաշտոնների ցանկում: Այլ կերպ ասած՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի մամուլի քարտուղարի, օգնականի և խորհրդականի, ինչպես նաև Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալների օգնականների իրավական կարգավիճակները հստակեցված չեն, ինչը նաև հանգեցնում է վերջիններիս սոցիալական և իրավական երաշխիքների անորոշության:

2. Միաժամանակ, ներկայումս Օրենքի 48-րդ հոդվածի 12-րդ մասի կարգավորումների համատեքստում կարիք կա հստակեցնելու հատուկ քննչական ծառայության ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար թափուր պաշտոնները ժամանակավոր զբաղեցնելու նշանակման կարգը:

3. Օրենքի անցումային դրույթներից բխում է նաև, որ Կոմիտեի ստեղծմանը հաջորդող որոշակի ժամանակահատվածում գործերի քննության իրականացման

համար նախատեսվել են քսան ինքնավար պաշտոններ: Մասնավորապես, Օրենքի 48-րդ հոդվածի համաձայն.

«2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում սույն հոդվածի 12-րդ մասով սահմանված կարգով քսան ինքնավար թափուր պաշտոնների համալրման օրվան հաջորդող օրը, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերի:

(…)

12. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված ակտերի հասրատումից հետո՝ եռօրյա ժամկետում, հատուկ քննչական ծառայության ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց հակակոռուպցիոն կոմիտեում քսան ինքնավար թափուր պաշտոնները ժամանակավոր զբաղեցնելու առաջարկություն է ներկայացնում: Սույն մասով նախատեսված անձինք ներկայացված առաջարկությանն իրենց համաձայնությունը կամ անհամաձայնությունը ներկայացնում են առաջարկությունն ստանալու պահից՝ եռօրյա ժամկետում: Այն դեպքում, երբ համաձայնություն ներկայացրած անձանց թիվը գերազանցում է քսանը, ժամանակավոր պաշտոնի նշանակվելու նախապատվությունը տրվում է հատուկ քննչական ծառայության կոռուպցիոն հանցագործություններով նախաքննություն իրականացնող անձանց, իսկ եթե նրանց թիվը ևս գերազանցում է քսանը՝ ավելի երկար փորձառություն ունեցող անձին, իսկ հավասար փորձառության դեպքում՝ տարիքով ավագին: Սույն մասով նախատեսված անձինք նշանակվում են հակակոռուպցիոն կոմիտեի համարժեք (բացառությամբ դրա անհնարինության դեպքի) պաշտոնների որպես պաշտոնակատար՝ պահպանելով հատուկ քննչական ծառայությունում չօգտագործված ամենամյա արձակուրդի համար դրամական հատուցում ստանալու իրավունքը:

(…)

22. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ օրենքով սահմանված կոռուպցիոն ենթադրյալ հանցագործություններով քրեական գործերի հարուցման հարցի լուծումը և նախաքննության իրականացումը վերապահվում է հակակոռուպցիոն կոմիտեին: Այլ քննչական մարմիններում գտնվող քրեական գործերը (նյութերը) ենթակա չեն փոխանցման հակակոռուպցիոն կոմիտե, բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի:

23. Սույն հոդվածի 12-րդ մասով նախատեսված անձանց նշանակումից հետո հատուկ քննչական ծառայությունում գտնվող կոռուպցիոն ենթադրյալ հանցագործություններով հարուցված քրեական գործերը (նյութերը), ինչպես նաև կոռուպցիոն ենթադրյալ հանցագործություններով քրեական գործի հարուցման փուլում գտնվող գործերը փոխանցվում են հակակոռուպցիոն կոմիտե:

24. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը այլ քննչական մարմիններում գտնվող կոռուպցիոն ենթադրյալ հանցագործություններով քրեական գործերը (նյութերը) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը կարող է այդ մարմինների քննիչների վարույթից վերցնել և հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի համաձայնությամբ հանձնել հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների վարույթին»:

Վերոգրյալից բխում է, որ Օրենքն ամբողջությամբ ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կոռուպցիոն ենթադրյալ հանցագործություններով քրեական գործերի հարուցման հարցի լուծումը (հաղորդումների քննարկում, առիթների և հիմքերի ստուգում) և կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով նախաքննության կատարումն ամբողջությամբ վերապահվելու է բացառապես հակակոռուպցիոն կոմիտեին, այսինքն՝ առաջիկա ամիսներին՝ Հակակոռուպցիոն կոմիտեում 20 ինքնավար թափուր պաշտոն ժամանակավորապես զբաղեցնող անձանցից 10 քննիչներին (մնացած պաշտոնները զբաղեցվելու են Կոմիտեի ղեկավարները՝ նախագահը, նրա տեղակալները, վարչության պետերն ու նրանց տեղակալները):

Ավելին՝ Օրենքն ամբողջությամբ ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո Հակակոռուպցիոն կոմիտե են փոխանցվելու հատուկ քննչական ծառայության վարույթում գտնվող կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերը և կոռուպցիոն ենթադրյալ հանցագործություններով քրեական գործի հարուցման փուլում գտնվող նյութերը:

Սույն Նախագծի մշակման անհրաժեշտությունը բխում է հանրապետության ողջ տարածքում, այդ թվում՝ Հատուկ քննչական ծառայությունում քննվող կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քանակային գերակշռությունից: Այսպես՝ միայն 2020 թվականին Հատուկ քննչական ծառայությունում ընդհանուր առմամբ քննվել է *580* քրեական գործ, որից *395-ը* եղել է կոռուպցիոն բնույթի, այսինքն՝ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ քննված քրեական գործերը տոկոսային հարաբերությամբ կազմել են ընդհանուր հանցագործությունների 68,1%-ը:

2021 թվականի մինչև սեպտեմբերի մեկն ընկած ժամանակահատվածում (միայն ութ ամսվա ընթացքում) Հատուկ քննչական ծառայությունում ընդհանուր առմամբ քննվել է *439* քրեական գործ, որից *308-ը* կոռուպցիոն բնույթի է, այսինքն՝ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ քննված քրեական գործերը տոկոսային հարաբերությամբ գերակշիռ մեծամասնություն են կազմել ընդհանուր հանցագործությունների մեջ, տոկոսային արտահայտմամբ՝ 70,1 %:

Ինչպես նկատում ենք 2021 թվականին 2020 թվականի համեմատությամբ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների էական աճ է գրանցվել:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2020 թվականին պաշտոնապես հրապարակված տեղեկություններին, նշենք, որ Հայաստանի Հանրապետությունում հաշվետու ժամանակահատվածում

գրանցվել է ընդհանուր առմամբ *1114* կոռուպցիոն բնույթի հանցագործություն, իսկ նույն ժամանակահատվածում վարույթում գտնված քրեական գործերով ու նյութերով կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քանակը կազմել է *1914* գործ[1]: 2021 թվականի մինչև հուլիսի մեկն ընկած ժամանակահատվածում գրանցված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քանակը կազմել է *534* գործ:

Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ Հակակառուպցիոն կոմիտեն մասնագիտացված լինելով բացառապես կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննությամբ, առաջիկայում իր վարույթ է ընդունելու և քննելու մեծ քանակի քրեական գործեր ու նյութեր, հետևաբար քննիչներն աշխատելու են աննախադեպ մեծ ծանրաբեռնվածության պայմաններում: Ուստի՝ մինչև Կոմիտեի նախատեսված բոլոր թափուր հաստիքների մրցութային կարգով համալրումը 20 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց ռեսուրսը վստահաբար բավարար չի լինելու նման մեծ ծավալով քննությունն իրականացնելու համար, ինչը թերևս անկասկած անդրադառնալու է ինչպես գործերի քննության որակի, այնպես էլ ողջամիտ ժամկետի հիմնարար սկզբունքի պահպանման վրա:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը ողջամիտ ժամկետի պահպանման պահանջի վերաբերյալ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- մինչ տարբեր ձգձգումներն ինքնին հարցեր չեն առաջացնում, դրանք, միասին վերցրած, և հանրագումարային առումով կարող են դառնալ ողջամիտ ժամկետը գերազանցելու պատճառ[2],

- «Երկարատև ժամանակահատվածը, որի ընթացքում վարույթը...դանդաղում է...» առանց ակնկալվող որևէ բացատրության, անընդունելի է[3],

---

[1] Տե՛ս https://armstat.am/file/article/sv_12_20a_540.pdf :

[2] Deumeland-ն ընդդեմ Գերմանիայի, § 90:

[3] Beaumartin-ն ընդդեմ Ֆրանսիայի, § 33:

- Վարույթի որոշակի փուլում ձգձգումը կարող է թույլատրելի լինել՝ պայմանով, որ վարույթի ընդհանուր տևողությունը չափազանց երկար չլինի[4],

- Վարույթի տևողության ողջամտությունը պետք է գնահատվի հետևյալ չափանիշների լույսի ներքո՝ գործի բարդություն, դիմումատուի և իրավապահ մարմինների դրսևորած վարքագիծ և այլն[5],

- Գործի բարդությունը կարող է կապված լինել և՛ փաստերի հիմքով, և՛ օրենքի հիմքով բարձրացվող հարցերի հետ[6],

- Պետությունը պատասխանատու է իր բոլոր մարմինների համար՝ ոչ միայն դատական մարմինների, այլև բոլոր հասարակական հաստատությունների համար[7]:

Օրենքի 48-րդ հոդվածի համաձայն.

«13. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը պաշտոնի նշանակվելուց հետո՝ երկամսյա ժամկետում, հաստատում է հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների ընտրության համար ձևավորվող մրցութային հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Մրցութային հանձնաժողով) գործունեության համար անհրաժեշտ՝ սույն օրենքի 17-րդ հոդվածով սահմանված ակտերը, Մրցութային հանձնաժողովում քաղաքացիական հասարակության ներկայացուցչի ներգրավման կարգը, ինչպես նաև հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթի կարգը և պայմանները:

(…)

---

[4] Pretto-ն եւ այլք ընդդեմ Իտալիայի, § 37:

[5] Comingersoll S.A.-ն ընդդեմ Պորտուգալիայի [ՄՊ], Frydlender-ն ընդդեմ Ֆրանսիայի [ՄՊ], § 43,Sürmeli-ն ընդդեմ Գերմանիայի [ՄՊ], § 128):

[6] (Katte Klitsche de la Grange-ն ընդդեմ Իտալիայի, § 55, Papachelas-ն ընդդեմ Հունաստանի [ՄՊ], § 39:

[7] Martins Moreira-ն ընդդեմ Պորտուգալիայի, § 60:

15. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված ակտերի հասրատումից հետո՝ հնգօրյա ժամկետում, դիմում է հակակոռուպցիոն ոլորտի քաղաքականության մշակման լիազոր մարմին, գլխավոր դատախազություն և Մարդու իրավունքների պաշտպանին՝ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաջին կազմի ընտրության համար ձևավորվող Մրցութային հանձնաժողովում ներգրավվելու նպատակով տասնօրյա ժամկետում հակակոռուպցիոն ոլորտի քաղաքականության մշակման լիազոր մարմնի երկու, գլխավոր դատախազության և Մարդու իրավունքների պաշտպանի առաջադրած մեկական անդամներ նշանակելու համար: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաջին կազմի ընտրության համար ձևավորվող Մրցութային հանձնաժողովում ներգրավվում է նաև քաղաքացիական հասարակության մեկ ներկայացուցիչ, որի ներառումն իրականացվում է հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի սահմանած՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցչի ներգրավման կարգին համապատասխան՝ սույն մասով նախատեսված ժամկետում: Մրցութային հանձնաժողովի աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են ներգրավվել նաև միջազգային փորձագետներ: Մրցույթի անցկացումն իրականացվում է սույն օրենքի 17-րդ հոդվածով սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները:

16. Սույն հոդվածի 12-րդ մասով նախատեսված անձինք հակակոռուպցիոն կոմիտեում ծառայող ընտրվելու նպատակով պետք է սույն օրենքով սահմանված կարգով մասնակցեն մրցույթի: Մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչվելու և հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից համապատասխան պաշտոնի նշանակվելու, ինչպես նաև մրցույթում հաղթող չճանաչվելու դեպքում սույն հոդվածի 11-րդ մասով նախատեսված անձինք ազատվում են պաշտոնից:»:

Օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների թեկնածուների (բացառությամբ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների) ցուցակը համալրում է մրցութային հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով):

(…)

6. Թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնելու վերաբերյալ հրապարակվում է հայտարարություն մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքէջում (www.azdarar.am) և հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

11. Մասնակիցը մրցույթի արդյունքները հրապարակվելուց հետո՝ երկօրյա ժամկետում, կարող է դրանք գրավոր բողոքարկել հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին: Բողոքարկման վերաբերյալ պատասխանը տրվում է մեկ օրվա ընթացքում:

12. Մրցույթի արդյունքների հրապարակումից հետո՝ գրավոր բողոքի բացակայության դեպքում, իսկ բողոքի առկայության դեպքում բողոքարկման վերաբերյալ պատասխան տալուց հետո՝ մեկօրյա ժամկետում, Հանձնաժողովը մրցույթում հաղթող ճանաչված թեկնածուների ցուցակը ներկայացնում է հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին: Ցուցակին կցվում են նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ներկայացրած խորհրդատվական եզրակացությունները:

13. Ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձինք «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքով սահմանված կարգով մասնագիտական պատրաստում են անցնում արդարադատության ակադեմիայում: (…)

14. Անձն ազատվում է սույն օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասով և սույն հոդվածի 13-րդ մասով նախատեսված ուսումնառությունից, եթե ունի դատավորի, դատախազի, քննիչի, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնողի պաշտոնում կամ փաստաբանի երկու տարվա մասնագիտական աշխատանքի ստաժ, եթե այդ պաշտոնը թողնելուց կամ գործունեությունը դադարեցնելուց հետո չի անցել հինգ տարի:

15. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը համապատասխան ուսումնառությունն ավարտած թեկնածուների կամ սույն հոդվածի 14-րդ մասով սահմանված թեկնածուների ցուցակն ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, կատարում է նշանակում համապատասխան պաշտոնում, իսկ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթի դեպքում մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցների ցուցակն ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, վարչապետին է առաջարկում մրցույթում հաղթող ճանաչված հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի թեկնածությունը՝ կցելով թեկնածուի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ներկայացրած խորհրդատվական եզրակացությունը:»:

Ինչպես տեսնում ենք, Հակակոռուպցիոն կոմիտեին հատկացված բոլոր հաստիքների մրցութային կարգով համալրումն իրենից ենթադրում է բարդ, տարաբնույթ և ժամանակատար գործընթաց, որը կարող է տևել նույնիսկ 5 և ավելի ամիսներ, քանի որ Օրենքի համաձայն այն իրականացվելու է 5 փուլով՝ փաստաթղթերի ուսումնասիրություն, թեստավորում, բարեվարքության ստուգում, հարցազրույց և արդյունքների ամփոփում:

Վերոգրյալ դրույթների համադրված վերլուծությունից պարզ է դառնում, որ մինչև Հակակոռուպցիոն կոմիտեին հատկացված բոլոր ինքնավար պաշտոնների մրցութային կարգով համալրումը, ամբողջ հանրապետությունում առկա կոռուպցիոն

ենթադրյալ հանցագործությունների նախաքննության իրականացումը վերապահված է լինելու Հակակոռուպցիոն կոմիտեի ընդամենը 20 ինքնավար պաշտոնները ժամանակավորապես զբաղեցնող անձանց: Միաժամանակ պետք է նշել, որ հիշյալ 20 ինքնավար պաշտոնների մեջ են մտնում նաև Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի, նրա տեղակալների, վարչության պետերի և նրանց տեղակալների հաստիքները: Այսինքն՝ այդ 20 ինքնավար պաշտոններից միայն 10-ն են ժամանակավոր զբաղեցնելու քննիչները:

Ստացվում է, որ միայն 20 ինքնավար պաշտոնները ժամանակավորապես զբաղեցնող անձանց /դրանցից ընդամենը 10-ն են լինելու քննիչ/ վրա է դրվելու այն աննախադեպ գերծանրաբեռնվածությունը, որը ներկայումս միայն ՀՀ հատուկ քննչական ծառայությունում բաշխված է առնվազն 35 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց միջև: Այն դեպքում, երբ ներկայումս կոռուպցիոն հանցագործությունների նախաքննության իրականացումը վերապահված է ոչ միայն ՀՔԾ-ին, այլև՝ մյուս քննչական մարմիններին (Քննչական կոմիտե, ԱԱԾ), իսկ Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծմամբ այն վերապահվելու է բացառապես այդ քննչական մարմնին:

Ավելի առարկայան պատկերացում կազմելու համար փաստենք, որ Ազգային անվտանգության ծառայությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ 2019 թվականի հուլիսի մեկից մինչև 2020 թվականի հուլիսի մեկն ընկած ժամանակահատվածում կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ քննվել է *184* քրեական գործ: Նախաքննությունն իրականացվել է *17* քննիչների կողմից: Պետական եկամուտների կոմիտեի ներկայացրած տվյալների համաձայն՝ նույն ժամանակահատվածում քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ քննվել է *28* քրեական գործ: Նախաքննությունն իրականացվել է համապատասխանաբար *13* քննիչների կողմից: Քննչական կոմիտեում վարված վիճակագրության համաձայն՝ նշված ժամանակահատվածում

քննվել է *1313* կոռուպցիոն բնույթի քրեական գործ, որից *555*-ը փոխանցվել է 2019թ.-ի առաջին կիսամյակից, իսկ *825*-ը փոխանցվել են 2020 թվականի երկրորդ կիսամյակ:

Հարկ է նշել նաև, որ համաձայն Հակակոռուպցիոն ռազմավարության՝ Հակակոռուպցիոն կոմիտեի տարածքային մարմինների ձևավորումը և համալրումը լինելու է աստիճանաբար մինչև 2022 թվականը: Սա ևս վկայում է, որ մինչ այդ վերոհիշյալ անձինք գործելու են գերծանրաբեռնված, ինչը իհարկե չի կարող չազդել գործերի պատշաճ քննության և որակի վրա: Այսպես, օրինակ՝ հեռավոր մարզերում գրանցված կոռուպցիոն ենթադրյալ հանցագործության յուրաքանչյուր դեպքում, կոմիտեի քննիչը, որին կհանձնարարվի տվյալ գործի քննությունը կգործուղվի համապատասխան մարզ, այնտեղ քննություն կատարելու, իսկ նրա վարույթում գտնվող մյուս գործերը կավելացնեն կենտրոնական ապարատի մյուս քննիչների բեռը:

Այսպիսով՝ պետք է փաստել, որ անիրատեսական է 20 ինքնավար պաշտոնները ժամանակավորապես զբաղեցնող անձանց միջոցով 5 և ավելի ամիսներ իրականացնել կոռուպցիոն բոլոր հանցագործությունների նախաքննությունը:

Վերոգրյալով պայմանավորված՝ Հակակոռուպցիոն Կոմիտեի արդյունավետ գործունեության իրականացման համար անհրաժեշտ կլինի նախնական 30 ինքնավար թափուր պաշտոնները ժամանակավորապես համալրել՝ ՀՔԾ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համապատասխան առաջարկ ներկայացնելու միջոցով:

4. Բացի այդ, պետք է նշել, որ Օրենքում առկա են նաև որոշ տեխնիկական վրիպակներ, որոնք անհրաժեշտ է ուղղել:

Առաջարկվող կարգավորումների բնույթը.

Հաշվի առնելով բարձրացված խնդիրները՝ նախագծերով առաջարկվում է՝

• լրացնել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում պետական հայեցողական պաշտոնների ցանկը և համապատասխանաբար «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի մարտի 24-ի ՀՕ-152-Ն օրենքը՝ սահմանելով Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի մամուլի քարտուղարի, օգնականի, խորհրդականի, ինչպես նաև Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալների օգնականների պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները,

• Կոմիտեում 20 ինքնավար թափուր պաշտոնը ժամանակավորապես զբաղեցնող անձանց քանակը ավելացնել ևս 10-ով՝ առաջիկայում սպասվելիք աննախադեպ գերծանրաբեռնվածությամբ պայմանավորված քննության որակին սպառնացող խոչընդոտներից ու խնդիրներից խուսափելու նպատակով, ինչպես նաև հստակեցնել վերջիններիս նշանակման հետ կապված իրավահարաբերությունները:

Նախագծերի ընդունման կապակցությամբ ֆինանսական միջոցների անհրաժեշտության և պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվելիք փոփոխությունների մասին.

Նախագծերի ընդունմամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագծերը մշակվել են Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության կողմից:

Ակնկալվող արդյունքը

Նախագծերով առաջարկվող իրավակարգավորումների ընդունման արդյունքում կապահովվի Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծման սահուն գործընթացը, ինչպես նաև Կոմիտեի ձևավորման սկզբնական շրջանում կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունավետությունը:

ՏԵՂԵԿԱՆՔ

Պ-047-23.09.2021-ՊԻ-011/1

Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում
~~*ՆԱԽԱԳԻԾ*~~

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության 2021 թվականի մարտի 24-ի թիվ ՀՕ-147-Ն օրենքի ~~41-րդ հոդվածի 1-ին մասի երրորդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.~~

~~«2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ՝ քննիչի, իսկ 2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ՝ դատախազի պաշտոն զբաղեցրած, ապա Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի պաշտոնում նշանակված անձի երկարամյա ծառայության կենսաթոշակի հաշվարկը կատարվում է «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման եւ սոցիալական երաշխիքների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով՝ համապատասխանաբար Հատուկ քննչական ծառայության ծառայողի կամ դատախազի համար սահմանված կարգով:»:~~

~~***Հոդված 2.*** Օրենքի~~ 48-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասում «քսան» բառը փոխարինել «երեսուն» բառով.

2. 12-րդ մասում՝

ա) «քսան» բառը փոխարինել «երեսուն» բառով ~~եւ~~ դրա համապատասխան հոլովաձևով~~հոլովաձեւով~~.

բ) լրացնել նոր նախադասություն.

«Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի թափուր պաշտոնը ժամանակավոր զբաղեցնելու նպատակով նշանակում կատարվում է վարչապետի,

իսկ մյուս ինքնավար թափուր պաշտոններում Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից:».

3. 15-րդ մասում «11-րդ» թիվը փոխարինել «13-րդ» թվով:~~.~~

~~2. 20-րդ մասի երրորդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.~~

~~«2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ՝ քննիչի, իսկ 2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ՝ դատախազի պաշտոն զբաղեցրած անձի երկարամյա ծառայության կենսաթոշակի հաշվարկը կատարվում է «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման եւ սոցիալական երաշխիքների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով՝ համապատասխանաբար Հատուկ քննչական ծառայության ծառայողի կամ դատախազի համար սահմանված կարգով:»:~~

Հոդված ~~3~~2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական ~~հրապարակումից հետո՝ անմիջապես:~~ հրապարակման օրվան հաջորդող օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ Պ-047-23.09.2021-ՊԻ-011/1 ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը

1.	Կառավարություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի	Առաջարկվում է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի և հարակից օրենքների նախագծերի փաթեթից հանել «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը, քանի որ Կոմիտեի ծառայողների համար ընդհանուր կարգով օրենսդրությամբ արդեն իսկ սահմանված են սոցիալական բավարար երաշխիքներ:	Ընդունվել է	Ընդունվել է

		Հանրապետության օրենքի նախագիծ «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքում	Սույնով պայմանավորված առաջարկվում է նաև վերանայել Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերելի դրույթները:		

		փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ			
2.	Կառավարություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ Հոդված 3 «Հանրային ծառայության	Առաջարկվում է վերոգրյալ նախագծերի քննարկվող դրույթներում անցումային կարգավորումները շարադրել հետևյալ խմբագրությամբ «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:»՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի կարգավորումները:	Ընդունվել է	Ընդունվել է

		մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ Հոդված 2			
3.	Կառավարություն	«Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ	Առաջարկվում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի խորհրդականի և մամուլի քարտուղարի վարձատրության պաշտոնական դրույքաչափը սահմանել 5.00՝ հաշվի առնելով վերջիններիս՝ Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության բնույթից բխող գործառութային և պաշտոնեական առանձնահատկությունները:	Ընդունվել է	Ընդունվել է

		կատարելու մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենք Հոդված 1			